ՅՈՒՅՍՈՎ, ԼՈՒՅՍՈՎ, ԵԿԵՂՄՈՎ...

ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Է ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ...

Նստիրային շատ պատահական հանդիպեցի, երբ ներս մտա Արցախյան պատերազմի մասնակից կանանց հանրապետական կոմիտե: Կռահեցի, որ հեռվից է եկել՝ մեզ համար մի ափ տարածություն, բայց հեռու տեղից: Պայմանավորվեցինք հետո հանդիպել և շտապեցի լրագրողի հույժ կարևոր գործերի ընթացքն ապահովել:

Շատ ժամանակ չանցած համալսարանի դասախոս Բ. Մեժունցն ինձ այցելեց լրագրող ուսանողուհիներից մեկի՝ Արմենուհի Հայրապետյանի հետ: Մենք որոշեցինք զրույցը վարել կազմակերպությունում: Ներս մտնելուն պես Մեղրիից այցելած բժշկուհին և Արմենուհին գրկախառնվեցին: Ինչպես ասում են՝ լինելիքը պետք է լինի, նաև առանց մեր կամքի, հաճախ՝ պարտադրված:

Արմենուհին ակտիվ լրագրող - ուսանողուհու համբավն իգուր չէր ձեռք բերել և իր հետ բերել էր բժշկուհու մասին հոդվածը՝ «Անկոտրում ոգին ընկճելը դժվար է»:

Ինձ պարզ դարձավ, որ բժշկուհուն ճանաչող լրագրողները, հիվանդները, այցելուները, մտերիմները բազմիցս ներկայացրել են նրա հեզաբարո խառնվածքը, անձնվեր աշխատանքը՝ թե՛ որպես բժշկուհի, թե՛ հարազա՛տ, թե՛ հայուհի, թե՛ մտերիմ և թե՛ ռազմուհի: Ես ստիպված էի «գենքս» վայր դնել և նրա մասին հոդվածն ընդունել Արմենուհուց՝ իրենց շատ սիրելի բժշկուհու մասին...

ԱՆԿՈՏՐՈՒՄ ՈԳԻՆ ԸՆԿՃԵԼԸ ԴԺՎԱՐ Է

Ազգային պայքարի հերոսապատումներից անմասն չմնաց Հայաստանի հարավային դարպաս՝ չրնաղագեղ Մեղրին: Մոլեգնած բշնամին փորձեց իր բարը մեր լեռներից էլ կախել, սակայն չարաչար սխալվեց:

Մեղրին, որը դարեր ի վեր իր պիրկ լեռներով անառիկ ամրոց էր մնացել և «բանկ հաճույք» յուրաքանչյուր ներխուժողի համար, այս անգամ էլ իր բաջարի և հայրենասեր զավակների շնորհիվ կանգուն մնաց՝ նահատակ տալով 19 հերոսներ:

Մեղրեցիները անգիր գիտեն բոլորին՝ անուն առ անուն: Սակայն նահատակվածների կողքին մնացին նաև շատերը, ովքեր այժմ կան և ապրում են մեր կողքին:

Նաիրա Շահինյան... Տեղացիներից յուրաքանչյուրը գիտե նրան: Քիչ է ասել, թե բժիշկ էր, սակայն ազգային պայքարի հենց սկզբից այն կամավորականներից էր, որոնք առաջին գծում էին՝ տղաների կողքին: Մի ձեռքում զենք, մյուսում՝ դեղորայքի պայուսակ, մարտնչում էր նա, կռվում իսկական զինվորին վայել:

«Ես ոչնչից չէի վախենում, բանզի հայի անկոտրում ոգին էր իմ մեջ բնածում, երակներովս հայի անարատ արյունն էր հոսում, ու հավատում էի, հավատում վաղվա լավ օրվան: Մահն ինչ էր որ, եթե նույնիսկ այցի էլ գար: Մենք ընկերովի էինք, իսկ դա արդեն հարսանիք էր»:

Այսպես էր պատմում յուրաքանչյուր անգամ, մարտից հետո:

Շիրանաձորն առաջին փորձադաշտը եղավ նրա համար:

«Տանն էի, հնչեց հեռախոսի զանգը. Շիրանաձորում բեժ մարտեր էին գնում, վիրավորները շատ էին»:

Այլընտրանք չկար: Այսքանը բավական էր, որ այնտեղ լիներ:

- Զգույշ մնա աղջիկս,- ասում էր մայրը՝ տիկին Օֆիկը:
- Պիտի գնամ, մայրիկ, հայրենիքը մեզ է կանչում:
- Իսկ եթե հանկարծ...
- Բան չի լինի, մայրիկ:

Մարտում վիրավոր ընկած, ժամանակ ու ցավ մոռացած զինվորների համար առաջին հերթին գթասիրտ քույր ու օգնող բժիշկ էր, իսկ զենքը ձեռքին կռվողների կողքին՝ խիզախ հայուհի:

Ձմռան ցուրտ օրերին էր, երբ մեկնեց Հորադիզ: Դարձյալ կրակ ու բոց էր շուրջ բոլորը, բշնամին վխտում էր Հորադիզի բարձունքում: Պետք էր գրոհով վերցնել դիմացի կրակակետը:

Հասցրեց հետը վերցնել միայն զինվորական իր բաճկոնը... Պետք էր օգնել տղաներին: Օր ու գիշեր հանգիստ չուներ բարեսիրտ ու հայրենասեր հայուհին, մտածում էր բոլորի մասին, ամենքը նրա երեխաներն էին:

Կռվի դաշտում էլ՝ հաղթանակից հետո, մեկ-մեկ հնչեցնում էր հայկական ազգային երգն ու պարը, և «Քոչարին» էր արձագանքում Հորադիզի լեռներում:

Այո՛, դժվարն առաջին քայլերն էին՝ Քելբաջար, Լաչին ու այսպես շարունակ...

Պայքարող ոգին դադար չունի, իսկ նրան ընկճելը՝ ավելորդ է: Իր հրամանատար՝ գնդապետ Ղևոնդ Հովհաննիսյանի հետ նա հայտնվում էր այնտեղ, ուր չէին ապասում, և միշտ արբուն էր ու պատրաստ «առաջին օգնությունը»:

Քանի ու քանի անգամ են փորձել տղաները համոզել, որ նա՝ նույն էակ, չարժե, որ իրենց հետ հավասար գիշերները խրամատներում անցկացնի: Սակայն «գթասրտության արձվին» համոզելն անհնարին էր:

Այնինչ՝ համբավի ու փառքի՝ չէր նա ձգտում ու խուսափում էր, որ իր մասին գրեն:

«Դե, ի՞նչ եմ արել որ, այդպես կվարվեր յուրաքանչյուր հայ»:

Այսօրվա բժշկուհի է զինվորական կոչմամբ:

«Թող սատանի ականջը խուլ մնա, բայց ես էլի պատրաստ եմ նորից լինել տղերքի կողքին, եթե փորձեն հայոց տան անդորրը խանգարել զենքով: Բայց երանե՝ կ այս մարտերը վերջինը լինեին, որ խաղաղ բացվեն առավոտները հայոց երկնակամարում, որ Հայրենիքի փրկության համար նահատակվածների անունները էլ երբե՛ք չավելանան»:

Արմենուհի Հայրապետյան
«Անանիա Շիրակացի» միջազգային
հարաբերությունների համալսարան, IV կուրս

Սիրելի ընթերցող, Քեզ ենք ներկայացնում նաև մայրության մեծափառ շնորհն ստացած մայրերից մեկի շնորհակալության նամակը՝ բժշկուհու մասին:

«Նա միայն ազատամարտիկ չէ, այլ նաև իր աշխատավայրում ճանաչված բժիշկ՝ առաջին կարգի թերապևտ և առաջին կարգի մանկաբարձ-գինեկոլոգ:

Եթե հիվանդ ես և բժիշկդ Նաիրա Շահինյանն է, որտեղն վստահ ես, որ կբժշկվես: Շնորհակալական խոսքեր, գլուխս, շատ են հղվել Նաիրային, որոնց ուզում եմ միանալ նաև ես:

Հանձարեղ Ավ. Իսահակյանը չի սխալվել, ասելով. «Միայն մայր լինելու համար արժե աշխարհ գալ»:

Հիրավի, մայրությունը սրբություն է: Երջանիկ է ոչ միայն նա, ով մայր ունի, այլև նա, ով մայրանում է:

35 տարեկան եմ: Հիմա կյանքն ինձ համար ուրիշ իմաստ ունի, բանի, որ ինձ բախտ է վիճակվել *Մայր դառնալ:*

Մանկաբարձ գինեկոլոգ Նաիրա Շահինյանը ոչ միայն ինձ կյանք պարգևեց, այլև՝ իմ նորածնին: Իմ տարիքային առանձնահատկությունները և այլ հանգամանքներ դրել են իրենց հրամայական կնիքը հատուկ:

Հանուն մայրանալու ես պատրաստ էի այդ վիրահատությանը: Ամեն կամոք արու զավակ ունեցա: Խորին երախտագիտությամբ ուզում եմ իմ երախտիքի խոսքն ուղղել նաև միջին բուժանձնակազմին:

Շնորհակալ եմ սիրելիներս՝ ձեր հոգատար վերաբերմունքի, ձեր մայրասիրության Հիպոկրատի երդմանը հավատարիմ լինելու համար: Մայր դառնալու անկրկնելի անվանակոչին արժանանալու համար, առաջին հերթին շնորհակալ եմ իմ բարի ու սիրելի բժշկուհի Նաիրային, նրա հսկողության տակ Լ. Ռ. Պողոսյանի անվան պոլիկլինիկայում անցկացրել եմ նախածննդյան կոնսուլտացիան, ստացել անհրաժեշտ բուժում, խորհուրդներ և ամենակարևորը՝ մեծ հոգատարություն:

Ես մայր եմ, իսկ դա պարտավորեցնող գործություն է: Յուրաքանչյուր կին նախ պետք է արժանի լինի մայրությանը, դրանցից կարողանա ոչ միայն լույս աշխարհ բերել, այլև դաստիարակել իր զավակին: Դաստիարակել այնպես, որ առաջին հերթին գնահատի իրեն լույս աշխարհ բերողին՝ սրբազան մայրը:

Թեպետ բժշկուհին իմ հասակակիցն է, դեռ ֆիզիկապես մայրանալու զգացումը չի ունեցել, բայց ինձ հետ նա մայրացավ, զգաց տարեց այդ վեհ, անկրկնելի զգացողությունը: Շնորհապարտ եմ նրան, իմ միակ երազանքն է տեսնել բժշկուհուն մոր կոչմանն իրականում արժանացած»:

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն